№ 180 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 17 **1902** ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 17 № 180

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են թերթանշիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օգաուէտ նախաձեռնութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ցաւալի երեւոյթ. Արեւելագէտների XIII միջազգային կօնգրէսը. Վերադարձող գաղթականների օգտին. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Պետերբուրգից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռուսաստանը եւ Անգլիան Պարսկաստանում. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

## ՕԳՏԱՒԷՏ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի բուսաբանական այգին յանձն է առել իր վրա մեր երկրի համար օգտակար մի գործ: Նա հիմնել է մի ընդարձակ մանկարան, որտեղ նա բուսցնում է թէ եւրոպական և թէ կովկասեան մրգերի տունկեր այն նպատակով, որ մի կողմից ինքը փորձեր և դիտողութիւններ անէ գանազան տեսակ ծառերի և բոյսերի վրա, իսկ միւս կողմից վաճառէ նրանց մեր երկրի այգեգործներին և գիւղատնտեսներին: Ներկայումս բուսաբանական այգում բաւական կը գտնէք եւրոպական բոլոր նշանաւոր մրգածառերի տեսակները, խնձորի, տանձի, ծիրանի, դեղձի, սալորի, բալի, դեղասի, թուզի, թթի, սերկեւիլի և այլն: Այդ տեսակների մի մասը առաջին փորձ է մեր երկրի զանազան կողմերում և նրանց պտուղները արդէն ծախվում են մեր քաղաքների վաճառանոցներում: Բայց դեռ սակաւաթիւ են և չափազանց թանգ գներով են ծախվում, անմատչելի դարձնելով միջին գնողների համար, իսկ ժամանակով, երբ նրանք կը տարածվեն շատ տեղերում, ոչ միայն մատչելի կը դառնան պարտիզների աւելի ընդարձակ խաւերի համար, այլ և կարող կը լինեն վաճառանվել ուրիշ տեղեր, որտեղ մրգերի պակաս կայ, բայց բաւականաչափ մթերք կայ:

Ամենքս գիտենք, որ մեր Կովկասը ինքը ունի գեղեցիկ մրգերի ազնուագոյն տեսակներ, որոնք որոշ յատկութիւններով ոչ միայն ստոր չեն եւրոպական տեսակներից, այլ և հաւասար են կամ նոյն իսկ գերազանց նրանցից: Այդ տեսակները պէտք է պահպանվեն և բազմացնվեն մեր երկրի մէջ թէ նրանց որոշ արժանաւորութիւնների պատճառով և թէ այն պատճառով, որ նրանք բոլորովին սովոր և ընտանի են մեր երկրին, ընտելացած են նրա պայմաններին և կարող են աւելի աջող և ապահով բուսնել, աճել ու զարգանալ:

Մի երկու տասնեակ տարի սրանից առաջ ամերիկացիները եկել էին Ռուսաստան ծանօթանալու նրա մրգատու ծառերի տեսակների հետ և ուսումնասիրելու եւրոպական Ռուսաստանում գտնվող տեսակները: Ապա նրանք տարածեցին այն տեսակները, որոնք ունէին յայտնի արժանաւորութիւններ: Ինչպէս լսվում է, այս տարի Կովկաս են եկել ամերիկացիներ նոյն նպատակով—ուսումնասիրելու մեր երկրի մրգերի և կուլտուրական բոյսերի տեսակները և ժամանակով պատուաստելու ու տարածելու իրանց հայրենիքում այն, ինչ որ կը գտնեն օգտակար, ձեռնտու և նպատակայարմար:

Այդ տեսակէտից շատ համակրելի է այն նախաձեռնութիւնը, որ յանձն է առել Թիֆլիսի բուսաբանական այգին կովկասեան կուլտուրական բոյսերի վերաբերութեամբ: Նա աշխատում է ձեռք բերել մեր երկրի բոլոր բոյսերը ու ծառերը և ապահովել թէ նրանց ազնուացման և թէ ընդարձակ տարածմանը երկրի մէջ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՑԱՒԱԼԻ ԵՐԵՒՈՅԹ

«Մշակի» մէջ շատ անգամ պատահում է կարդալ գաւառներից գրած նամակներ, որոնց մէջ արձանագրվում են ծննդականների մահվան, կամ սաստիկ հիւանդութեան դէպքեր, որոնք հետեւանք են «տատմէրների» գործ դրած մանկաբարձական արհեստի:

Այսպիսի դէպքեր մեծ մասամբ պատահում են խուլ անկիւններում, խաւարի մէջ կորած գիւղերում: Ցաւալի իրողութիւն է, որը սակայն ունի իր բացատրութիւնը գիւղերի սոցիալական դրութեան մէջ եւ հէնց այդ պատճառով էլ այնքան դատապարտելի չէ: Բայց ինչ կասէք դուք, երբ այդ ցաւալի երեւոյթները տեղի են ունենում այնպիսի տեղերում, ինչպէս, օրինակ, Կաղզուանում, ուր կային եւ կան ուսումնարաններ, ուսումնաւարտ ամուսնացած երիտասարդներ տեղացիներից, կայ իրան «ինտելիգենտ» համարող երիտասարդութիւն: Կայ «գրասիրաց» ընկերութիւն, կայ վերջապէս վաճառականական դասակարգ, եւրոպական «զայդով» ապրող եւ տարազով հագնվող, մանաւանդ, կանայք եւ օրիորդներ: Սրանք ամենքը կարդում են «Մշակ» եւ այլ թերթեր, սրանց համարեա թէ ամենքի տանը կը գտնէք բժ. Վ. Արծրունու եւ բժ. Բուդուղեանի հանրամատչելի գրքոյկները եւ ուրիշ հրատարակութիւններ: Այժմ տեսէք, որ ոչ միայն հասարակ կաղզուանցիների, այլ նոյն իսկ վերեւ յիշատակած անձնաւորութիւնների տներում երբ պատահում են ծննդականութեան դէպքեր, հրաւիրվում են ոչ թէ կրթված մանկաբարձուհիներ, այլ անպայման տեղական տատմայրեր, որոնք անշուշտ 80% վնաս են հասցնում ծննդականներին:

Քաղաքում կան երեք մանկաբարձուհիներ, որոնցից մէկը մանաւանդ շատ փորձված, հմուտ է իր արհեստում, վերին աստիճանի բարեխիղճ եւ անշահասէր: Եւ դիտէք երբ են դիմում սրանց մեր մանտոներով եւ շլեապաներով մանեկող տիկինները,—երբ, ինչպէս ասում են, դանակը ոսկրին է հասնում: Քանի անգամ մեզ, տեղացի բժիշկներիս, պատահել է տեսնել տատմայրերի շնորհիւ մահվան դուռն հասցրած ծննդականներ: Որքան հիւանդութիւններ զաւակատան եւ միւս օրգանների հետեւանք են տատերի կոպիտ գործողութիւնների, մանաւանդ նրանց անմաքրութեան, որի շնորհիւ յաճախ կարելի է տեսնել «ծննդական տենդ» կոչված հիւանդութիւնը, որ անմիջական հետեւանք է անմաքուր ձեռքերով ծննդականին մօտենալուն: Այս հիւանդութիւնը ծննդականին չը հասցնելու համար՝ արդի մանկաբարձութիւնը պահանջում է ոչ միայն ամենախիստ կերպով մաքրել ձեռքերը, այլ նոյն իսկ ախտահան անել նախքան մանկաբարձը կամ մանկաբարձուհին կը մօտենայ ծննդականին, կը սկսէ իր գործը, որպէս զի չը վարակէ: Քանի քանի դէպքեր «սուր սակաւարիւնութեան» (острое малокровіе) պատահել է տեսնել մեզ, բժիշկներիս, շնորհիւ այն հանգամանքի, որ տատմայրերը արիւնահոսութեան դէպքերում չը գիտնալով ինչպէս առաջն առնել, արիւնաքամ են անում խեղճ ծննդականներին, իսկ սրա հետեւանքները շատ ծանր են ընդհանուր առողջութեան համար:

Այս եղանակով մեր հասարակութիւնը վրատանգի է ենթարկում իր մտերիմների կեանքը եւ ինչու համար: Գուցէ կը կարծեն, որ մանկաբարձուհի հրաւիրելը շատ թանգ է նստում: Ո՛չ, չքաւորներից մանկաբարձուհիները ոչինչ չեն պահանջի, (մինչդեռ տատերը պահանջում են), իսկ ունեւորի համար ինչ նշանակութիւն ունի 2—3 ռուբլով աւելի վճարելը:

Ոչ, բանը վճարումը չէ, ուղղակի մի տեսակ սովորութիւն է դարձել տատ հրաւիրելը եւ խորթ է թւում, երբ ռուս մանկաբարձուհին հրաւիրվի: Մանկաբարձուհին երբ հրաւիրվում է՝ անմիջապէս երեխային ընդունելուց յետոյ մաքրում է ծննդականին, երեխային լողացնում, կարեւոր դեղեր տալիս եւ հեռանում է: Ապա ամեն օր այցելում է, հետեւում է, որ ծննդականութեան հետեւող չրջանը չը շեղվի կանոնաւոր ճանապարհից: Իսկ տատերը առաւօտից մինչեւ երեկոյ նստում են ծննդականի տանը, շատ անգամ եւ գիշերում, «խորթայ» են անում անհամար թւով ժողովված ազգական եւ «դրկից» կանանց հետ, (իսկ մանկաբարձուհին աւելորդ կանանց հեռացնում է, որ իզուր տեղ օդը չապականեն) լուանում են ծննդականի եւ երեխաների շորերը, իսկ մանկաբարձուհին այդ, ի հարկէ, չի տնի: Հարկաւոր է ուրեմն սրան հրաւիրելու դէպքում եւ մի լուացարար կին հրաւիրել:

Ահա այս մեր մէջ մարմնացած աւանդապահութիւնն է, սովորութիւններն են, որ ասպարէզ են բերում տատմէրներին նոյն իսկ հասկացող անհատների տներում:

Բժ. Գ. Կաճկաճեան

Կաղզուան.

## ԱՐԵՒԵԼԱԳԷՏՆԵՐԻ XIII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՕՆԳՐԷՍԸ

(Նամակ Խմբագրութեան)

Արեւելագէտների XIII միջազգային կօնգրէսի կարգադիր յանձնաժողովը խնդրած լինելով ինձ, իբրեւ կօնգրէսի անդամին, ընդարձակ տեղեկութիւններ տալ հասարակութեան կօնգրէսի մասին, պարտք եմ համարում ի լրումն «Մշակի» մէջ արդէն յայտնված տեղեկութիւնների, հետեւեալ մանրամասնութիւններն հաղորդել, քաղելով յանձնաժողովի մինչեւ այժմ հրատարակած երեք տեղեկագրից:

Ինչպէս յայտնի է, կօնգրէսը գումարվելու է Համբուրգում ներկայ օգոստոս ամսի 22-ին (սեպտ. 4-ին ն. տ.) եւ փակվելու է 28-ին (սեպ. 10-ին), տեւելով ընդամենը 6 օր: Դեռ 1899-ին, Հռոմում գումարված XII կօնգրէսը նշանակել էր Համբուրգը իբրեւ XIII կօնգրէսի գումարման տեղ: Կօնգրէսը բաղկացած պէտք է լինի հետեւեալ բաժանմունքներից (séction).

1) Լեզուագիտութիւն, ընդհանուր հնդկա-գերմանական բաժանմունք, 2) Հընդկաստան, Իրան, 3) Հնդկա-Չինաստան եւ Ովկիանա (ծայրագոյն Արեւելք, 4) Կենտրօնական եւ Արեւելեան Ասիա, 5) Ընդհանուր սեմիտական բաժանմունք, 6) Իսլամական բաժանմունք, 7) Եգիպտական եւ աֆրիկական լեզուներ, 8) Փոխադարձ յարաբերութիւններ Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ. ա) հին ժամանակներում, բ) միջին դարերում եւ այժմ, 9) Գաղթականական հարցերի բաժանմունք:

Կօնգրէսի անդամ լինել կարող են 1) արեւելագիտութեամբ պարապող գիտնականներ, վճարելով անդամակցական տուրք 20 մարկ (10 ռուբլի), 2) պետութիւնների պաշտօնական ներկայացուցիչները, 3) գիտնական հաստատութիւնների, ճեմարանների եւ համալսարանների ներկայացուցիչները:

Մինչեւ այժմ հետեւեալ պետութիւններն են յայտնել իրանց մասնակցութիւնը եւ նշանակել իրանց ներկայացուցիչներին, այն է՝ Գերմանիա, Աւստրօ-Ունգարիա, Ռուսաստան, Ֆրանսիա, Այժիր, Բելգիա, Եգիպտոս, Հնդկաստան, Պարսկաստան: Ռուսաստանի ներկայացուցիչն է պրոֆէսօր Նօֆալ, Պարսկաստանինը՝ Ցուվհանէս խան Մասեհեան, Ֆրանսիայինը՝ պրոֆէսօրներ Մասպէրօ եւ Էմիլ Սէնար: Գիտնական հաստատութիւններից կը յիշեմ հետեւեալները. 1) Բրիւսէլի, Հայդլբէրգի, Ենայի, Հեսսէնի, Լայպցիգի, Հալլի, Մարբուրգի, Ստրասբուրգի, Թուլուզի, Լիոնի, Կէմբրիջի, Էդինբուրգի, Պետերբուրգի, Իւրիեվի, Ժընէվի, Լօզաննի, Բերնի, Բալտիմօրի (Ամերիկա) համալսարանները. 2) գերմանական արեւելեան լեզուների սեմինարը. Մինխէնի գիտութիւնների թագաւորական ակադէմիան, Մինխէնի Աշխարհագրական ընկերութիւնը, Պարիզի Աշխարհագրական ընկերութիւնը, Լօնդօնի Ասիական ընկերութիւնը, Վիկտորիա ինստիտուտը, Լօնդօնի Եպաւօնական ընկերութիւնը, Իտալական Ասիական ընկերութիւնը, Պրագայի գիտութիւնների ակադէմիան, Ունգարական գիտութիւնների ակադէմիան, Պետերբուրգի գիտութիւնների ակադէմիան, Ամերիկայի Արեւելեան ընկերութիւնը եւ այլն:

Եւրոպական շատ նշանաւոր գիտնականներ եւ պրոֆէսօրներ մասնակցում են կօնգրէսին, թէ իբրեւ անդամ, թէ իբրեւ ներկայացուցիչ այս եւ այն գիտական հաստատութեան, թէ անձնապէս եւ թէ փոխանորդաբար. շատերն էլ, չը կարողանալով անձամբ մասնակցել, ուղարկել են իրանց բէֆէրատները: Ռուսաստանից բացի ներկայացուցիչ պրոֆէսօր Նօֆալից՝ մասնակցում են տիկին Օլգա Լեբեդէվա, ակադեմիկոս բարօն Բոզէն, Ջերբացկոյ, գեներալ Շվէդով, պրոֆէսօր Դօնտէր: Հայերից մասնակցում են պրիվատ-դոցէնտ դոկտոր Լեւոն Մսերեանց եւ տողերիս գրողը: Առաջինը ներկայացրել է հետեւեալ բէֆէրատները. 1) Ուրարտական (Վանեան) տարերքը հայոց լեզուի մէջ, 2) Եբրայա-թաթ եւ հայկա-թաթ լեզուի մասին, 3) Հայ պատմագիր Կիրակոս Գանձակեցու (XIII դար) մօտ գտնված բառագրական (lexicographie) նիւթերի մասին նախնական ծանօթութիւններ: Ես ներկայացրել եմ հետեւեալ բէֆէրատները. 1) Հայերի յարաբերութիւնները Արեւմուտքի հետ միջին դարերում եւ 2) Քիւրդերը Պարսկաստանում:

Մինչեւ օգոստոսի 1-ը պաշտօնապէս յայտարարված եւ ներկայացրված բէֆէրատների թիւը հասնում է 70-ի, որոնց մէջ մեզ, կովկասցիներիս, համար հետաքրքրական են հետեւեալները. 1) պրոֆէսօր դոկտոր Իէնսէնի—«Հետտիտ-հայկական արձանագրութիւնների ընթերցումը», 2) պրոֆէսօր Հօրնի—«Մի նոր պարսկական բառգրքի մասին առաջարկութիւններ». 3) պրոֆէսօր Ժակսօնի—«Պարսկաստանի հին կրօնի մասին մի քանի հարցեր». 4) պրոֆէսօր Կազատտէլիի—«Պարս եւ փեհլեվի ուսման վերաբերեալ գրական գործունէութիւնը 1892—1902 թի ընթացքում. 5) պրոֆէսօր Բէլլեոտ—«Հոնների հարցի մասին». 6) պրոֆէսօր Մէրքսի—«Հին կտակարանի ազդեցութիւնը տիեզերական պատմութեան զարգացման վրա». 7) դոկտոր Հալէվիի—«Սեպաձեւ այբբենի ծագման մասին». 8) տ. Օ. Լեբեդէվայի—«Ռուսաստանի եւ ուրիշ երկիրների մահմէդականների կրթութեան եւ առաջադիմութեան մասին». 9) Աթէնքի պրոֆէսօր Լամպրօսի—«Հայ ընտանիքները բիւզանդական կայսրութեան մէջ եւ նրանց ազդեցութիւնը». 10) Բրեհիէի—«Արեւելցիների ազդեցութիւնը արեւմտեան քաղաքակրթութեան վրա միջին դարերում (5—8 դար)»:

Համբուրգ քաղաքը մի չարք հիւրասիրութիւններով որոշել է յարգել կօնգրէսի անդամներին. կատարվելու են եւ զուարճասիրական արշաւանքներ շրջականերում:

Հ. Առաքելեան

## ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք հայրենիք վերադարձող գաղթականների օգտին. պ. Ելաղեանի ձեռքով ժողովված հետեւեալ անձերից 7 ռուբլի 75 կոպէկ—Պ. Ելաղեանց 2 ռ., Գ. Ելաղեանց 1 ռ., Մ. Ելաղեանց 1 ռ., Բ. Նաւտիկեանց 50 կ., Ց. Ելաղեանց 25 կ., Մ. Դէլիխանեանց 50 կ., Ա. Մարտիրոսեանց 50 կ., Ա. Շամուգեաից 50 կ., Ս. Սահաթաղեանց 50 կ., Գ. Միքայէլեանց 1 ռ.: Ս. Մանուկ Աղայեանց 1 ռ., Մկրտիչ Աղաբաբեանց 5 ռ.: Ցակոբ Ալիխանեանի ձեռքով 28 ռուբլի 55 կոպէկ, ժողովված հետեւեալ անձերից՝ Նիկողայոս Բաւէեանց 1 ռ., Օ. Բ. 1 ռ., Аркаша и Варвара 1 ռ., Արշակ Ցակոբեանց 1 ռ., Շուշանիկ Դաւթեանց 1 ռ., Հ. Բէօրակճեանց 1 ռ., Ց. Պապովեանց 30 կ., Մկրտիչ Այդանեանց 1 ռ., Մ. Սարգիսեանց 50 կ., Ն. Շահբազեանց 3 ռ., Ա. Տէր-Աբրահամեանց 20 կ., Կ. Խանդուլեանց 1 ռ., Ս. Աւետիսեանց 50 կ., Ս. Մ. Ղուկասեանց

1 ր., Համբարձում Թորոսեանց 1 ր., Միխայիլ Բաղդասարեանց 1 ր., Գրիգոր Դաւթեանց 50 կ., Դարչո Խէչատրեանց 20 կ., Տէր-Յովհաննէսեանց 3 ր., Ալէքսանդր Մարգարեանց 20 կ., Գէորգ Սարգսեանց 25 կ., Սպասատեցի մշակ Ակօփ 10 կ., Գէորգ Արարատեանց 40 կ., Ասատուր Թարլանեանց 30 կ., Ա. Մարգարեանց 50 կ., Յհաննէս Քալմեկեանց 25 կ., Օր. Ե. Ս. 20 կ., Մ. Ղազարեանց 50 կ., ոցանոց Հուստոմոց 1 ր., Տ. Եսայեանց 50 կ., Ասլան Մկրտումեանց 50 կ., արտոնոց 20 կ., Մուսոյոլ ոանցարոցո 20 կ., Յակոբ Մկրտչեան Անիտոնեանց 25 կ., Գէորգ Ղուկասեանց 50 կ., Աբրահամեանցները Սարգիս եւ Միխայէլ 2 ր., Меликовъ 1 ր., Ա. Պաւլովեանց 50 կ.։ Լեւոն Վարդանեանց (մատաղի փոխարէն) 10 ռուբլի։ Յարութիւն Յունունցեանց (մատաղի փոխարէն) 10 ռուբլի։ Բանուորեան 1 ր., Իվան Ահարոնեանց 3 ր., Եղբ. Մելիք-Մարութեաններից 10 ր., Եղբ. Գ—ից 5 ր., Պ. Պ—ից 3 ր., Եղբ. Յ. եւ Հ. Բաբաջանեանների միջոցով 5 ր., որ ժողովված է Յ. եւ Հ. Բաբաջանեաններից՝ 3 ր., Ն. Շահբաղեանց 1 ր., Գ. Յովսէփեանց 50 կ., Լ. Յովհաննիսեանց 50 կ., Սղնախեցի 1 ր., Գ. Փիրումեանց 5 ր., (մատաղի փոխարէն), Զաքարէ Գրիգորեանց 5 ր., Ա. Թարայեանց 1 ր., Ա. Մովսէսեանց 1 ր., Ն. Աստուածատրեանց 1 ր.։ Էփրեմ Ծատուրեանց 3 ռուբլի։ Ընդամենը նախկին ստացվածների հետ միասին 757 ռուբլի 10 կոպէկ։

## ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ

Օգոստոսի 3-ին

Ներկայ ամիսն սկսվեց վատ եղանակով։ Ահա երեք օր է, որ կէս օրից յետոյ անձրեւ է գալիս։ Առաջին օրը երեք քառորդ ժամի չափ խոշոր կարկուտ եկաւ, որ զգալի վնաս հասցրեց քաղաքիս բանջարանոցներին։ Եթէ անձրեւներն այսպէս շարունակվին, անպայման մեծ վնասներ կը տան մեր խեղճ գիւղացիներին։

Գրեթէ ամեն տարի մեր գաւառում յունիսի սկզբից մինչեւ յուլիսի վերջը չորային է անցնում, այսինքն ցանքերի այն ժամանակը, երբ անձրեւի ամեն մի կաթիլը մի ոսկի արժէ, երբ խոտը պէտք է աճէ, հացահատիկների ցողունը բարձրանայ եւ քիստեր արձակէ։ Ահա այդ ժամանակ երկինքը քարանում է ու անձրեւ չէ տալիս։ Իսկ երբ արդէն հունձն սկսվել է եւ պէտք է կալսել, անտեղի այնքան անձրեւ է գալիս, որ բացի գործերը յետաձգելուց, մեծամեծ վնասներ է հասցնում։

Սակայն եթէ մարդս ընդունակ չէ բնութեան քմահաճոյքը սանձահարելու, գոնէ այնքան խելացի պէտք է լինի, որ ինքը յարմարվի բնութեանը։ Արդ՝ ակներեւ տեսնում ենք, որ գարնանացանը, մանաւանդ լեռնային մասերում, բաւական ուշ է մնում ու միշտ ցրտից ու անձրեւներից վնասվելու վտանգի մէջ է, ինչու չը մտցնել աշնանացանի սիստեմը։ Ախալքալաքն աւելի բարձրադիր տեղ է, քան թէ մեր գաւառը։ Այնտեղ էլ գարնանացանը միշտ վնասվում էր ցրտից, ուշանում էր հունձը, մընում էր աշնան անձրեւների տակ, որից ահագին վնասներ կային։ Նրանք այս տարի աշնանացան արին եւ արդէն փորձը ցոյց է տալիս, որ աշնանացանը խիստ աջող է անցել։ Ուրեմն ինչու նոյնը չը փորձել մեր տեղում։

Ասում են, որ մեր գաւառի հողն աւելի ուժեղ է, մի տարուց յետոյ սերմի յատկութիւնը կը փոխվի. մինչդեռ կարմրահատ ցորենը հարիւրաւոր տարիներ կարելի է ցանել, սպիտակահատը չուտով կը դառնայ։ Ցանկալի է, որ մեր գիւղատնտեսները պարզէին, թէ ինչպիսի հողի վրա կարելի է ցանել սպիտակահատը եւ թէ Շիրակի աւազոտ հողը չէ՞ կարող բուսցնել սպիտակահատ եւ ինչպէս պէտք է ցանել այդ հողում, որ սերմի յատկութիւնը չը փոխվի։

Այս տարվայ բերքն ամբողջ գաւառում լաւ է, իսկ լեռնոտ մասերում մինչեւ իսկ գերազանց։ Գիւղացիներն ընդհանրապէս խիստ գոհ են, եթէ անձրեւները չը խանգարեն եւ թոյլ տան երեսի ջրով կալսելու, գիւղացին այս տարին տասը տարվայ գլուխ կը հաշարէ։ Առատութեան նպաստող հանգամանքներն են.—ցանքը չորութիւնով սկսվեց, որի շնորհիւ սերմի հետ անպէտք քոլ ու խոտ չը բուսաւ եւ արտերը ծլեցին մաքուր. գարնանային յորդ անձրեւները կանոնաւոր շարունակվեցին մինչեւ յունիսի 7-ը. այդ ժամանակ թէ դաշտային եւ թէ լեռնոտ մասերում արտերը չը վնասվեցին քամուց ու թռչուններից եւ բուսած ծիլերը թաւ կերպով ծածկեցին հողի երեսը։ Ճիշդ 23 օր անձրեւ չեկաւ, որի հետեւանքն այն եղաւ, որ խոտը սակաւ եղաւ, հացահատիկները կարճ մնացին, այնպէս որ անցեալ տարվայ համեմատութեամբ յարդը պակաս է։ Անձրեւի կտրվելը դաշտային մասի համար արդէն զգալի էր դարձել, այն ինչ լեռնոտ մասերում, ուշ ցանված լինելով՝ չը վնասվեցին։ Եթէ անձրեւը մի փոքր էլ ուշանար, դաշտում ցանքը կը փչանար, բայց եւ այնպէս գարին նուազ մնաց, իսկ ցորենը լցվեց ու լաւացաւ։ Ինչ ասել կուզէ, որ լեռնոտ տեղերում, Արխվային Սարիար, Քէֆլի եւ այլն թէ ցորենը եւ թէ գարի, շատ լաւ են։ Մի խօսքով, ցորեն թէ գարին սայլը մի սոմար է տալիս դաշտում, իսկ լեռնանիստ տեղերում աւելի։

Գիւղացու համար այս տարին ամենաաջող տարիներից մէկն էր։ Այս տարի նա ազատ էր պատահարներից։ Անցեալ տարի Արագածի ստորոտներում եղջիւրաւոր անասունների ժանտախտն ու նրա հետեւանք ճանապարհների փակվելը մեծ վնասներ տուեցին ողջ գաւառին. բացի դրանից, գաւառի հիւսարեւելեան լեռնոտ մասում մուկ երեւաց, տեղ տեղ էլ կարկուտը զարկեց։ Այս տարի ոչինչ զգալի վնաս չեղաւ, եթէ չը հաշուենք կարկտի մի դէպք, որ տեղի ունեցաւ Դիրաքլարում, Քեափանակներում, որոնց վնասը զգալի է։

Տարվայ առատութեան շնորհիւ, յոյս կայ, որ ցորենի սոմարը չը բարձրանայ 13—15 ռուբլուց, իսկ գարին՝ 7—8 ռուբլուց աւելի չի լինի, թէկուզ մեծ քանակութեամբ դուրս տարվելու լինի։

Առատ է նաեւ տարերում ցանված կտաւատը։ Գաւառում երկու տեսակ կտաւատ է ցանվում—տափակ եւ սոլորուն։ Առաջինը գեղեցիկ ներկաձէթ է տալիս, որի համար մեծ քանակութեամբ արտահանվում է դէպի Բաղու, Թիֆլիս, Օդեսսա, իսկ վերջինը տալիս է սեւ ձէթ եւ տեղական գործածութեան համար է մնում։ Կտաւատն անցեալ տարի շատ սուղ էր եւ սոմարն արժէր 20 ռուբլի, գարնան սկզբին սերմացուի համար ծախվում էր կտաւատի կոտը 2 ռուբլի, իսկ այժմ, աջող բերքի շնորհիւ, որքան եւ դուրս տանելու լինեն, այնուամենայնիւ սոմարը 12—14 ռուբլուց վեր չի բարձրանայ։ Պէտք է ասել, որ կտաւատի ցանքերը քանի գնում ընդարձակվում են, որովհետեւ պահանջը մեծ է եւ, ինչպէս երեւում է, հողն էլ նպաստաւոր է։ Անցեալ տարի մեր քաղաքի խոշոր վաճառականները մօտ 100 վագօն կտաւատ տեղափոխեցին դէպի զանազան քաղաքներ։

Մեր գիւղացին մինչեւ վերջին տարիներս իր միակ յոյսը դրել էր հացահատիկների, առաւելապէս ցորենի ու գարու վրա, իսկ գիւղատնտեսական այլ պարապմունքները նրա համար անծանօթ էին։ Այսպէս, օրինակ, գիւղացին չը գիտէր կարտոֆիլի մշակութեան գաղտնիքը եւ չէր հասկանում, թէ որքան արդիւնաւոր պարապմունք է իր համար։

Միայն վերջերս, երբ գիւղացին համոզվեց, որ հողը յոգնել է եւ լիովին չէ վարձատրում իրան աշխատութեան փոխարէն, հետամուտ եղաւ եւ սովորեց կարտոֆիլի մշակութիւնը։ Զը նայելով գաւառում գործածվող կարտոֆիլի մեծ պահանջին, այնուամենայնիւ դեռ այս պարապմունքը չէ ընդհանրացել բոլոր գիւղերում. գաւառի ընդարձակ հողերի մէջ, 1901 թ-ին, միայն 243 դեսեատին էր կարտոֆիլ ցանված։

Այս տեսակ մի նոր պարապմունք է գիւղերում նաեւ բոստանչութիւնը։ Մի քանի տարի առաջ ոչ մի տեղ մի կապ կանաչի չէր ճարվում, հիմա շատ գիւղերում ընդարձակ բոստաններ են ձգված, որոնց տէրերը բաւական օգուտներ են ստանում։ Եթէ բոստաններ դժուար էր գտնելը, այդի ու ծառեր բոլորովին չը կային։ Ընդհանրացած մի կարծիք կար, թէ մեր կլիման ցուրտ է, պտղատու ծառեր չեն աճի։ Թէ քաղաքում եւ թէ Քաֆթարլի գիւղում փորձերը հակառակը ցոյց տուին. բանից դուրս եկաւ, որ բացի խաղողից, բոլոր պտուղներն էլ կը հասնեն։ Ներկայումս Քաֆթարլին տեսնողը կը մնայ հիացած. գիւղը ամբողջապէս ծառերի մէջ կորել է, այն էլ պտղատու ծառերի։ Անցեալ տարի «վարդապետի բաղից» մօտ յիսուն պուդ բալ ծախվեց, թէեւ այս տարի բերքը սակաւ է։

Ուղիղ է ասած, թէ օրինակը վարակիչ է։ Այդ գիւղին մօտիկ գիւղերն էլ հետեւում են նրան եւ յոյս կայ, որ տարիներ յետոյ մեր ծառերով ու պարտէզներով ամայի գիւղերը պիտի զարդարվեն ճոխ բուսականութեամբ։ Արդէն նշաններն երեւում են. տեղ-տեղ գիւղերում, կալերի շուրջը, արտերի թմբի վրա, առուների եզերքներին, տնկած են հարիւրաւոր բարդի, ուռի եւ այլ ծառեր, որոնք ոչ միայն բաւականացնում են իրանց տէրերին, այլ եւ ծախվելով, տալիս են ահագին արդիւնք։

Ցանկալի էր, որ այդ ծառերի հետ միասին մտնէին նաեւ թթենիներ. թութը գուցէ չը հասնի մեր գաւառում, բայց ծառերն անկասկած կաճեն եւ զարկ կը տան շերամապահութեանը։ Եասաղուլի, Օրթաքիլիսայի եւ առհասարակ այդ կողմերի գիւղերը պաշտպանված լինելով հիւսիսային ցուրտ քամիներից, կարող էին թթենիներ աճեցնել։

Նման փորձեր կարելի է անել վարդենիներ մշակելու համար։ Վարդի թուփն արդէն պահանջում է բարեխառն կլիմայ, որը յատուկ է մեր գաւառին. թուփը շատ ջուր ու խնամք չէ պահանջում եւ մէկ արմատից տարիների ընթացքում ընդարձակ տարածութեան վրա նոր ծիլեր կը բուսնեն։ Ստացված վարդը թէ սովորական գործածութեան պէտք կը գայ եւ թէ կոնենեանք նոր արդիւնք—վարդի իւղ ու ջուր։

Ներսէս քահ. Նիկողոսեան

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կօջօր, օգոստոսի 15-ին

Մի հետաքրքրական խօսակցութեան մասին է խօսքս, որ տեղի ունեցաւ այս օրերս Կօջորում։

Ցաւալի է, որ Կօջորը այն տեսակ ամարանոցներից է, ուր տարվայ ընթացքում միայն երեք ամիս բնակութիւն է լինում, իսկ մնացած ժամանակ ամայութիւն է, դատարկ եւ փակ են տները, ոչ ոք չէ բնակում, բացի մի քանի ռուս, հայ եւ վրացի պահապաններից։ Ցաւալի է եւ այն, որ այդ ամարանոցն ունի հայոց եկեղեցի, քահանայ եւ երէցփոխ։ Վերջինս ընտրվում է, ինչպէս եւ ամեն տեղ, ծխականներից եւ վարում է այդ պաշտօնը համաձայն օրէնքի երեք տարի։ Այժմ հարց է։ ովքեր են այդ եկեղեցու ծխականները, ուրիշ խօսքով, որոնք իրաւունք ունեն մասնակցելու ընտրութեան։

Թիֆլիսի կօնսիստորիան մի որոշ կարգադրութիւն չէ արել ցարդ այդ մասին։ Նրա զանազան ժամանակներում գրած ընտրութիւնների վերաբերմամբ հրամաններից տարբեր բաներ են երեւում։ Մէկում իրաւունք է տրված մասնակցելու միայն տեղական կալուածատէրերին, միւսում՝ կալուածատէրերին եւ ամարանոց եկող ժողովրդին եւ երրորդում՝ ընդհանուր խօսքով—հայ ժողովրդին։ Վերջին ընտրութիւնը, որ տեղի ունեցաւ ամիս 11-ին, մի խառն բան էր. բոլորը, ի հարկէ, արական մասը եւ չափահասները, որոնք այդ օրը ներկայ էին եկեղեցում պատարագին, մասնակցեցին ընտրութեան, մինչեւ անգամ այնպիսիներ, որոնք Բագուից, Շուշուց, Գանձակից հէնց այդ օրը Կօջոր գալով՝ իրանց բարեկամների տեսութեան՝ Երեկոյեան վերադարձան։

Ցանկալի էր, որ հոգեւոր իշխանութիւնը այս տեսակ ամարանոցների երէցփոխների ընտրութեան ժամանակ մի որոշ կարգադրութիւն—հրամանդ տար ապագայում դժուարութիւնների եւ թիւրիմացութիւնների առաջն առնելու համար։ Տեղական հայ ժողովրդի մեծամասնութեան կարծիքն է, տալ իրաւունք հայ կալուածատէրերին եւ ամարանոց եկողներին, որոնք առնուազն երեք տարի շարունակ եղել են այդտեղ։

Ընտրող

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բերլին, օգոստոսի 10-ին

Բերլինում ներկայ եղող ուսանող անձինք, կարդալով պ. Ե. Թ.-ի «Մշակի» № 151-ում տպված յօդուածը պ. Բ. Խալաթեանցի մասին եւ հնարաւորութիւն չունենալով յօդուածի բովանդակութիւնը քննելու, որոշեցին հրապարակով յայտնել իրանց դժգոհութիւնը այդպիսի ձեւով, այսինքն անձնականութիւնը խիստ կերպով շօշափող յօդուածի առիթով։ Ցանկալի է, որ պ. Խալաթեան պարզէ շօշափած կէտերը։

10 անձինք

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պետերբուրգ, յուլիսի 29-ին

«Մշակ» լրագրի այս տարվայ № 153-ում մի նամակ կար տպագրված Պետերբուրգից՝ «Քահանայական խնդիրը Պետերբուրգում» վերնագրով։ Այդ նամակը վերաբերում է իմ՝ իբր թէ ապօրինի կերպով քահանայ ձեռնադրվելուս։

Նախ քան ցոյց տալս՝ թէ որքան օրինաւոր է կամ ապօրինի իմ ձեռնադրութիւնը, հարկ եմ համարում ուղղել պ. Դիտողի նամակի մի սխալը, որ էական նշանակութիւն ունի։

Պ. Դիտողը գրում է, որ իմ դէմ կազմած բողոքները Պետերբուրգի բոլոր ծխականների ստորագրութեամբ են եղել։ Այդ ճիշտ չէ։ Ինձ ուղարկած թղթին ստորագրել են 90 հոգի։ Դրանց թւում կան եկեղեցական երգիչներ, մի թիւրքահպատակ հայ եւ մի հոգի էլ երկու տեղ է ստորագրել։ Եթէ ընդունենք անգամ, որ այդ 90 հոգին բոլորն էլ բողոքողներ են, այն ժամանակ էլ չէ կարելի այդ բողոքը անուանել «բոլոր ծխականների ստորագրութեամբ», քանի որ տեղիս ծխականների իսկական թիւը, ինչպէս կը տեսնի խմբագրութիւնդ իմ ուղարկած տպագրված ցուցակից, 209 է։ Բայց ինձ համար այն է, որ այդ 90 հոգու կէսից ստորագրել են կամ անգիտակցաբար՝ բովանդակութիւնը լաւ չը հասկանալով, խաբվելով։ Օրինակ մէկին ասել են՝ թէ նորընծային գիւղ են ուղարկել, մենք խնդրում ենք, որ այստեղ թողնեն. մէսին՝ թէ մի քանի մանէթի բան է, ստորագրի ուրիշին էլ՝ թէ եկեղեցական բան է այլն (պատրաստ եմ փաստեր ներկայացնել։ Ես ամաչում եմ մէջ բերել այստեղ ստորագրողներ տալու այն եղանակը, որպիսին թոյլ են տուել իրանց եկեղեցական խորհրդի պ.պ. անդամները՝ նոյն իսկ եկեղեցու մէջ։ Բաւական է, որ եկեղեցու ռուս ժամկոչն անգամ ասել է՝ թէ ինչպէս կարելի է ժամերգութեան ժամանակ մարդու թեւից բռնելով բերել եւ, թոյլ չը տալով թղթի բովանդակութիւնը կարդալու, ստորագրել տալ։ Եւ պ. Դիտողը՝ տեսնելով ստորագրել տալու այդ խորամանկ ձեւը, բացականչում է. «Ես առանց անգամ տեսայ Պետերբուրգի ժողովրդի մեծ մասի այդպիսի միութիւն»...

Ահա այդ տեսակ ստորագրութիւնից յետոյ ստորագրողների մեծագոյն մասը՝ տեսնելով իրանք խաբված են, երես են դարձրել եւ հրաժարվել են միւս թղթերին ստորագրելուց։ Որ այդպէս է, ապացոյց սրան այն, թէ մեր մեծ սրբազան առաջնորդին ուղարկվելու թուղթը, չորս ամիս տեղիս բոլոր ծխականների խանութները պտտելուց յետոյ, աղտոտված ու պատառոտած, հազիւ 25 ստորագրութիւն ունի։ Իսկ եկեղեցական խորհրդին տրված թղթի ստորագրութիւնը դեռ սրանից էլ պակաս է։ Արդեօք անբարեխղճութիւն չէ՞ վերջնալ ասել՝ թէ բողոքները Պետերբուրգի բոլոր ծխականների ստորագրութեամբ են, քանի որ բողոքողների իսկական թիւը 35-ից չէ անցնում։ Եւ ինչ իրաւունքով, լրագրական որ տիկայի համաձայն պ. Դիտողը հրատարակութեան է յանձնում բարձր սրբազան առաջնորդին ուղարկվելու թղթի պատճէնը, երբ նրա իսկականը ըստ պատկանելոյն դեռ չէ յանձնված։

Բնական է, որ երբ մի մարդ որ եւ է պաշտօնի մէջ է, նա անշուշտ իր համակրողներին հետ կունենայ նաեւ իր հակառակորդներ։ Ուրեմն ինչ մի զարմանալու բան կայ, եթէ 209 ծուխ ունեցող ժողովրդի մէջ ունենան 35, թէկուզ 50 հակառակորդ։

Այժմ գանք իմ ձեռնադրութեան։

«Քահանայական խնդիրը Պետերբուրգում» դեռ 1841 թուի Բարձրագոյն հաստատված կանոնադրութեամբ որոշված ու հաստատված է։ Բերում եմ ներքին գործերի մինիստրութեան մի հաղորդագրութիւնը, ուղղած մայրաքաղաքների եկեղեցիների իշխան հոգաբարձուին։ Այդ հաղորդագրութիւնը վերաբերում է տեղիս քահանաների ընտրութեանը եւ տպագրված է տեղիս եկեղեցական խորհրդի կանոնադրութեան 88-րդ երեսում։

Разъясненія Министерства Внутренныхъ Дѣлъ къ Высочайше утвержденнымъ правиламъ объ управленіи имуществами столичныхъ армянскихъ церквей, изложенныя въ отношеніяхъ на имя Г. Попечителя столичныхъ Армянскихъ церквей.

*Отношеніе отъ 23 Марта 1887 г. за № 1381.*

На основаніи п. 7 Высочайше утвержденныхъ 31 Января 1841 г. правилъ, управленіе имуществами столичныхъ армяно-григоріанскихъ церквей, а также избраніе для нихъ священнослужителей и причта, предоставлено Попечителю означенныхъ церквей, по предварительномъ сношеніи съ епархіальнымъ начальствомъ. Таковое право не могло быть отмѣнено позднѣйшимъ закономъ 18 Ноября 1883 г., которымъ измѣненъ лишь порядокъ управленія церковными имуществами, причемъ вопросъ объ избраніи священнослужителей не подлежитъ разсмотрѣнію.

Принимая во вниманіе, что на основаніи ст. 12 Осн. Гос. Зак. т. I, ч. I, законъ сохраняетъ свое дѣйствіе, доколѣ не будетъ отмѣненъ силою новаго закона, правила 31 Января 1841 г. относительно избранія священнослужителей и причта не должны считаться отмѣненными.

*Ահա այդ օրէնքի հիման վրա է կատարվել իմ ձեռնադրութիւնը։ Մայրաքաղաքիս եկեղեցիների իշխան հոգաբարձուն ինձ համար առաջարկութիւն է արել թեմիս բարձր սրբազան առաջնորդին, եւ սրանց մէջ ունեցած փոխադարձ գրութիւններից յետոյ ես, իշխան հոգաբարձուի միջոցով, հրաւիրվել եմ Քիշնեւ եւ ձեռնադրվել։ Իմ գնալս յայտնի է եղել տեղիս հոգեւոր կառավարութեանը եւ ժողովրդի մի մասին։*

Պ. Դիտողը ուշադրութեան արժանի մի երեւոյթ է համարում այն հանգամանքը, որ ինձ ուղարկած թղթին ստորագրել են եկեղեցական խորհրդի բոլոր անդամները։ Արդարեւ իրաւունք ունի պ. Դիտողը ընթերցողի առանձին ուշադրութիւնը դարձնել այդ բանի վրա. սակայն որ տեսակէտով, այս է խնդիրը։

Ինչպէս տեսաւ ընթերցողը, իմ ձեռնադրութիւնը կատարված է համաձայն պետական օրէնքի որոշ յօդուածի։ Այդ յօդուածին անշուշտ քաջ տեղեակ են խորհրդի բոլոր անդամները, մանաւանդ չորս չինովնիկներ, որոնցից մինը նոյն իսկ գաղտնի խորհրդականի աստիճան ունի։ Ստորագրելով իմ ձեռնադրութեանս դէմ կազմված գունաւոր ու թունաւոր բողոքը

...գրին, չէ՞ որ դրանով յիշեալ չինովնիկները ...միայն գիտակցաբար պետական օրէնքն են ...ել, այլ եւ գայթակղեցրել ու մոլորեցրել են ...պէս ուրիշներին, եւ ուրեմն սրանք օրի- ...ն տուել օրինազանցութեան, ամենքիս ...ակ են պարտադիր պետական օրէնքի չարաչար ...համար այլված տների փոխարէն։

Խորէն քահանայ Մնացականեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, օգոստոսի 16-ին, հայրենիք ուղեւորող գաղթականների թիւը հասնում էր 60 ...գու, իսկ Նախընթաց օրը, օգոստոսի 15-ին, ...նապարհ ընկան դէպի հայրենիք մօտ 200 գաղթականներ։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսեցի Երուանդ ...նդինեանց չէ տալիս բաղիշեցի գաղթական Պետրոս Տէր-Յարութիւնեանցի ինն ամսվայ ...ը—65 բուբլի։ Պետրոս Տէր-Յարութիւ- ...ան եղել է պահապան (дворникъ) Ե. Ման- ...նեանի տանը։

—

Ներկայումս միջնորդութիւն է յարուցված ...պետական անտառներից ձրիաբար փայտեղէն ...ալու մասին հրդեհից վնասված Ցխինվալցինե- ...ին։ Փայտեղէնը պէտք է գործադրվի գլխաւո- ...պէս նոր շինութիւններ կառուցանելու հա- ...մար այրված տների փոխարէն։

—

Ռուսց թատրոնական ընկերութիւնը, մայ- ...քաղաքի լրագիրների ասելով, կուղարկէ մօտ ...ամանակներումս Ռուսաստանի բոլոր տեղերը ...արցերի թերթեր՝ իմանալու թատրոնական ...ին տեղական անձերի կարծիքը թատրոնա- ...ն օրէնդրութեան վերաքննութեան մասին։ ...ացված պատասխանները կը կազմեն վիճա- ...գական նիւթեր, որոնցով աւելի բացայայտ ...գով կը պարզվի թատրոնական գործի դը- ...թիւնը Ռուսաստանում, քան մինչեւ այժմ ...անի էր։ Ցիշված հարցերի թերթերից կու- ...ակէն մի քանի հազար հատ։ Առաջին տարան- ...ը կուղարկվի նահանգապետներին՝ բաժա- ...ու այն պաշտօնական անձերին, որոնք շը- ...ան ունեն թատրոնական գործի հետ Ռուս- ...ստանում։

—

«Тифл. Листокъ» լրագիրը լսել է, թէ մի ...քանի բժիշկներ մտադրութիւն ունեն սանա- ...տորիա հիմնելու Մցխէթում։

—

Առաջիկայ սեպտեմբեր ամսին Հոլլանդիա- ...մ տեղի է ունենալու միջազգային մեղուա- ...կան համաժողով։ Այս առիթով Պետեր- ...գի նիդերլանդական դեսպանը դիմեց երկ- ...գործութեան եւ պետական կալուածների ...նիստրութեան՝ խնդրելով ներկայացուցիչ նը- ...անակել Ռուսաստանի կողմից համաժողովին ...մանակցելու համար։ Երկրագործութեան մի- ...նիստրութիւնը՝ Նորին Մեծութիւն Թագաւոր ...ուհուն բարեհաճութիւնն ստանալուց յետոյ՝ Ռուսաստանի ներկայացուցիչ նշանակեց Մոսկ- ...ի համալսարանի պրիվատ-դոցէնտ Կոժեվ- ...նիկովին։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը, հաղոր- ...դելով Թիֆլիսի նահանգապետին, թէ մի ա- ...մսաթերթ դիմել է մինիստրութեան եւ թոյլ- ...ություն է խնդրել ատամնաբուժական կուր- ...սեր բանալու Թիֆլիսում, խնդրում է նահան- ...գապետին տեղեկութիւն տալ,—կայ արդեօք ...Թիֆլիսում ատամնաբուժական կուրսեր ...բանալու եւ չը կայ որ եւ է արգելք այդ բանի ...դէմ։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Օգոստոսի 11-ին, Մ. Խանամիրեանի թատրոնական դահլիճում ...կայացաւ կայսերական կենսերվատորիայի ու- ...սանող պ. Ե. Բաղդասարեանի հմտերգը։ Թատ- ...րոնում հաւաքվել էր մեծ բազմութիւն։ Քա- ...ոնն խումբը երգում էր ներդաշնակ։ Բացի ...հոգեւոր երգերից երգեցին մի քանի հայերէն ...եւ ռուսերէն romances։ Պ. Բաղդասարեանի ...ելնական «Քեզ» romance երգում էր պ. Ա. ...Գրիգեան. դաշնամուրի վրա նուագողներից ...էի ընկաւ օր. Հ. Ղալամեան եւ Ե. Սարու- ...հանեան. ջութակի վրա նուագում էր ուսա- ...ցի Տէր-Գրիգորեան։ Օր. Մ. Սարգսեան լաւ ...երգեց «Ո՜հ, ինչ անուշ»։ Օրիորդի ձայնը փոքրիկ ...բայց գեղեցիկ։ Ամենից վերջը «Արեւելեան ...գիտուն էր», բաղկացած մօտ 50 հոգուց, ...նուագում էին թառերի, սազերի, ...ճանչաւերի, ջութակների, նաղարաների, ...շատ արեւելեան գործիքների վրա՝ ներ- ...դաշնակած զանազան ձայներով։ Արեւելեան ...օրկեստրը կազմել է պ. Բաղդասարեանը։ Այս ...տարի կոնսերվատորիայի վարչութիւնից 100 ...բուբլի նուէր ստանալով՝ պ. Բաղդասարեան ...եկաւ այստեղ եւ կազմակերպեց 50 հոգուց ...այդ օրկեստրը։ Հասարակութիւնը կրկնել տուեց ...մի քանի կտորներ եւ շատ գոհ մնաց օրկեստ- ...րից»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 9-ին Բագուի նահանգական դատարանի այստեղի բաժինը քննեց հետեւեալ գործը։ 1901 թւի դեկտեմբերի 19-ին Ջիմի գիւղից՝ Աղաջան բէկ-Հաջի-Մէյթի-բէկ-օղլին եւ Թառլան-բէկ-Զալ-բէկ-օղլին սպանում են իրանց հօրեղբօր որդուն Ալու-բէկ-Աղայ-բէկ-օղլուն։ Պատճառը եղել է հետեւեալը. նոյն տարվայ աշնանը Իսրաֆէլ-բէկ-Հաջի-Մէյթի-բէկ-օղլին նշանվում է իր հօրեղբօր աղջկայ հետ, որին սիրում էր նամանդէս եւ Աբու-բէկ-Աղայ-բէկ-օղլին։ Վերջինս հայրը՝ Աղայ-բէկ-Հաջի-Նուրի-բէկ-օղլին տեսնելով, որ աղջկան իր որդու հետ չեն ամուսնացնում, այլ կամենում են ամուսնացնել Իսրաֆէլ-բէկի հետ, գնում է, նրան սպանում է. այդ սպանութիւնից յետոյ թշնամութիւն է ծագում, եւ սպանվածի եղբայրը Աղաջան-բէկը եւ նրա եղբօր որդին Թառլան-բէկ-Զալ-բէկ-օղլին գնում են սպանում են Աբու-բէկին։ Դատարանը կոչված են 20 գկաներ. մեղադրեալներին պաշտպանում են Թիֆլիսի փաստաբաններ Օպօչինին եւ Գէյդէման, որոնք հաստատելով իրանց կլիէնտների անմեղութիւնը, խնդրեցին արդարացնել կամ միայն Աղաջան-բէկին պատժել. դատարանը Աղաջան-բէկին երեք տարով բանդարկութեան դատապարտեց, իսկ Թառլան-բէկ-Զալ-բէկ-օղլուն արդարացրեց»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մեր քաղաքի Ագուլեցոց եկեղեցու երէցփոխը ամեն միջոցներով խոյս է տալիս եկեղեցական հաշիւները հրապարակ հանելուց։ Հոգեւոր կառավարութիւնից նշանակված հաշուեւեռները 6 ամիս շարունակ ջուր ծեծելուց յետոյ՝ ստիպված եղան հրաժարական տալու։ Թէ երէցփոխը, թէ մի քանի պարոններ եկեղեցու փողերով եկեղեցու համար անչարժ կայքեր են գնել, հաստատել իրանց անունով եւ տեղները հանգիստ նստել... Սպասում ենք մի վախճանի այս տարօրինակ անտէրութեան»։

—

ՇՈՒԼԱՎԷՐԻՑ մեզ գրում են. «Վերջերս թէ մեր եւ թէ հարեւան գիւղերում շատ շներ սկսել են կատաղել ու կծել շատերին։ Իշխանութեան կարգադրութեամբ թէեւ թափառող շները սպանված են, սակայն դրանով չարիքի առաջը չէ առնված։ Գիւղացիները ոչ մի կերպ չեն ուզում հիւանդներին տանել Թիֆլիս Պաստօրեան կայարանը եւ նրանց առանց տանջանքների բժշկել հեշտութեամբ։ Բոլորն էլ, իրանց հին սովորութեան պէս, բժշկում են «ալաքլունգ» (шпанскія мухи) կոչված բզէզներով։ Գարնան կամ աշնան սկզբներին ժողովում են այդ բզէզներից եւ գլուխները կտրելով դէն գցում (որովհետեւ գլուխներից պատրաստած փոշին երբեմն ստրիխնինի ոյժ ունի) եւ չորացնելով մարմինը, աղում են գերմակ ու որոշ քանակութեամբ գինի հետը խառնելով ու եօթերորդ օրը խմացնում հիւանդին։ Ճիշդ է, այդ դեղը խմողներից լաւացողներ էլ են լինում, բայց այդ միջոցով բժշկվողը պիտի գլխից ձեռք վերցնէ, որովհետեւ երկու օր հիւանդը սոսկալի տանջանքներ է կրում, մինչեւ որ սկսում է արիւն միզել, որը նշան է թէ դեղը ազդել է։ Բայց «ալաքլունգը» խիստ ներգործող միջոց լինելով, շատերը ստանում են երիկամունքների եւ միզապարկի բորբոքում եւ նոյն իսկ երբեմն պայթում է միզապարկը։ Բաւական չէ, որ այս սոսկալի տանջանքներին ենթարկում են հիւանդներին, նոյն տանջանքներին ենթարկում են առողջներին, որոնց մօտով անցել է կատաղած շունը։ Այս օրերս կատաղած շների կծած երեխաների ծնողներից երկուսը խմացնում են երեխաներին քիչ քանակութեամբ «ալաքլունգ» եւ երեւակայում, որ բժշկել են։ Մի ամսից յետոյ երկու երեխաներն էլ կատաղեցին, որոնցից մէկին տարան Պաստօրեան կայարանը, ուր եւ երկրորդ օրը մեռաւ, իսկ միւսը մեռաւ այստեղ։ Գոնէ թող այս անմեղ զոհերը օրինակ լինեն ագէտներին միւս անգամ չը դիմելու այսպիսի վայրենի բժշկութեան։ Իսկ խրատ ու ապացոյց մեր մի քանի երեւակայող երիտասարդներին, որ պիտի անպայման խոնարհվել գիտութեան առաջ եւ չը գովել զանազան հէքիմների բժշկութիւնը»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ԱՆԳԼԻԱՑՈՒՄ

—

Պարսից Շահի Լոնդոն գալու առիթով «Times» տպեց մի յօդուած, որի մէջ խօսում է անգլո-պարսկական բարեկամական յարաբերութիւնների մասին, բերում է ստատիստիքական փաստեր առեւտրական շրջանառութիւնների վերաբերմամբ, յիշում է այն «ծառայութիւնները», որ անգլիական դրամագլուխները մատուցել են Պարսկաստանին, եւ վերջապէս նկատում է, որ միայն մի երկիր կայ, որի շահերը Պարսկաստանում կարող են համեմատվել Անգլիայի շահերի հետ՝ դա Ռուսաստանն է։

«Times» խոստովանում է այն փաստը, որ ռուսական ազդեցութեան զօրեղանալը Կասպից ծովից մինչեւ Աւղանստան ապահովեց խաղաղութիւնը այն շրջաններում, ուր Պարսկաստանը չէր կարող ինքը պահպանել կարգը. խոստովանում է, որ Ռուսաստանի առեւտուրը Պարսկաստանի հետ հաւասարվում է Պարսկաստանի արտաքին առեւտրի համարեա կէսից աւելին, եւ որ Ռուսաստանի ձեռք բերած ազդեցութիւնը Պարսկաստանի հիւսիսում «գոնէ նոյնքան մեծ է, որպէս Անգլիայի ազդեցութիւնը Պարսկաստանի հարաւում»։

Պարսկաստանի այդպիսի պայմաններում գտնվելը առաջին հայեացքից շատ փափուկ եւ դժուար է երեւում, բայց «Times» մի եւ նոյն ժամանակ գտնում է, թէ որովհետեւ ռուսաց եւ անգլիական առեւտրի հետեւանքը միմիայն շահերի ընդհարումն է լինելու, այդ պատճառով Պարսկաստանը մինչեւ անգամ շահ է ունենալու այդ մրցութեան մէջ եւ որ «Պարսկաստանում տեղ կայ թէ ռուսական եւ թէ անգլիական ձեռնարկութիւնների համար»։

«Շահը եւ նրա առաջին մինիստրը—շարունակում է «Times»—պէտք է գիտակցեն, որ Պարսկաստանը կարիք ունի վարչութեան վերակազմութեան եւ որ նա, Պարսկաստանը, չէ կարող ապրել առանց օտար դրամագլուխների օգնութեան եւ օտարազգիների աջակցութեան, որոնք աւելի ձեռնարկող ոգի ունեն եւ աւելի լուսաւորված են»։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Berliner Tageblatt» լրագրին հաղորդում են Սոֆիայից, թէ 15 ուսուցիչներ եւ աստիճանաւորներ, որոնք գտնվում էին պետական ծառայութեան մէջ, արձակվեցին պաշտօններից, որովհետեւ հակառակ բոլգարական կառավարութեան հրահանգների, մասնակցել էին մակեդոնական կոնգրէսին։

—Բոէրական գեներալները յամառութեամբ հրաժարվում էին լրագրական գործիչների հետ խօսակցութիւններ ունենալուց, երբ գտնվում էին Անգլիայում եւ Հոլլանդիայում։ Չը նայելով ամեն տեսակ ջանքերին, որ գործ էին դնում անգլիական ժուրնալիստները խօսեցնելու բոէրական գեներալներին, նրանց չաջողվեց հասնել իրանց նպատակին։ Կապշտադտից ուղեւորվելուց առաջ գեներալ Բոտա յայտնեց «Daily Express» լրագրի թղթակցին այն պատճառները, որ ստիպում են նրան խուսափել ժուրնալիստների հետ խօսակցութիւններ ունենալուց։ «Ես հաստատ կերպով վճռել եմ դադարի պահել իմ կարծիքներս եւ հայեացքներս եւ, կարծում եմ, ոչ ոք չի դատապարտի ինձ այդ բանի համար։ Ես շատ անգամ եմ խօսակցութիւններ ունեցել ժուրնալիստների հետ, յաճախ իմ համաձայնութեամբ, եւ աւելի յաճախ՝ հակառակ իմ ցանկութեան, եւ միշտ էլ իմ խօսքերս աներեւակայելի կերպով աղաւաղված եւ աղճատված են եղել։ Ես չեմ ուզում պնդել, թէ այդ աղաւաղումները կատարված են դիտմամբ, այնու ամենայնիւ նրանք ինձ պատճառել են լուրջ եւ մեծ անախորժութիւններ։ Ինձ վերագրվել են ամենաանհեթեթ մտքեր։ Ես հայրենասէր եմ եւ զինուոր, եւ ոչ ոք ինձանից աւելի չէր կարող տանջվել այն օրը, երբ ստորագրվեց խաղաղութիւնը։ Ես հաւատում էի, որ իմ փոքրաթիւ խեղճ ազգը, իր հերոսական պատերազմից յետոյ, այն բոլոր զոհերից եւ տանջանքներից յետոյ, որ նա կրեց յանուն ազատութեան, կը ստանայ այն հզօր պետութիւնից, որ նուաճեց նրան իր ոյժով, մի փոքրիկ պարգեւ,—անկախութիւն։ Բայց այդ բանը մեզ մերժեցին։ Մենք պարտաւոր ենք հաշտվել անխուսափելի հանգամանքների հետ, բայց մեր սրտերը, ի հարկէ, տխուր էին, երբ մենք ստորագրում էինք խաղաղութիւնը։ Սակայն ժուրնալիստները ինձ ցոյց էին տալիս այնպէս, որ իբր ես ուրախանում եմ այդ տխուր հանգամանքներում։ Այդ մասին գրում էին ոչ միայն հարաւային Աֆրիկայում, այլ եւ ամեն տեղ»։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 օգոստոսին

ԽԱՐԿՈՎ։ Այսօր, համայսարանի դահլիճում, տեղի ունեցաւ հնագիտական տասներկուերորդ համաժողովի հանդիսաւոր բացումը։ Համաժողովի պատուաւոր նախագահ Մեծ Իշխան Սերգեյ Ալէքսանդրովիչ ուղարկեց մի հեռագիր։ Նախագահում էր կոմսուհի Ռէվարսքայա։

ՊԻՆՍԿ։ Տեղի ունեցաւ գաւառական կոմիտէի առաջին նիստը գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքների մասին։

Կ. ՊՕԼԻՍ։ Սեւ-ծովեան նաւատորմի հրամանատար ծովապետ Տիրտովի յետաձգված այցելութիւնը կը կայանայ ռուսաց դեսպանի այստեղ գալուց յետոյ. դեսպանը կը վերադառնայ մի շաբաթից յետոյ։

ԽԱՐԿՈՎ։ Հնագիտական համաժողովի երէկվայ նիստում նախագահ ընտրվեց կոմսուհի Ռէվարսքայա։

16 օգոստոսի

ԳՈՒՐԶՈՒՖ։ Արդարադատութեան մինիստրը այցելեց Գուրզուֆ կալուածքը եւ վերադարձաւ Եալտա։

Կ. ՊՕԼԻՍ։ Երէկ Իլդիզ-Կիոսկ կանչվեց հայոց պատրիարք Օրմանեան. այնտեղ սուլթանի առաջին քարտուղարը յայտնեց նրան, թէ բացառիկ միջոցները հայերի դէմ կը վերացնվեն, եթէ պատրիարքարանը երաշխաւոր կը լինի հայերի վարմունքի համար Թիւրքիայում։ Պատրիարքական խորհրդի նիստում կազմվեց մի ուղերձ, որով հայերի կողմից հաւատարիմ հպատակութիւն է յայտնվում սուլթանին։ Սպասում են, որ գահակալութեան տօնից առաջ, օգոստոսի 19-ին, կը հրատարակվի համապատասխան իրադէ։

ԼԻԼԼ։ Կանադական առաջին մինիստր Լորիէ, որ եկել էր այստեղի ցուցահանդէսը այցելելու, մի հանդիսաւոր ճաշկերոյթի ժամանակ ասաց, թէ պատմական անցքերի ընթացքը բաժանեց Կանադան Ֆրանսիայից, բայց առեւտրական յարաբերութիւնները կարող են վերականգնվել եւ Կանադա գնացող Ֆրանսիացիները կը գտնեն այնտեղ բնակչութեան համար բարեյաջող պայմաններ։

ԲԵՐԼԻՆ։ Իտալական թագաւորը կայսրի հետ միասին այսօր ուղեւորվեց Բերլին, ներկայ եղաւ նոր դրօշակների օրհնութեանը, հանդիսաւոր ճաշկերոյթին եւ ներկայացմանը։ Թագաւորը շնորհեց կանցլեր բիւլովին Անունցիատայի շքանշանը, երեքպետեան դաշնակցութեան վերանորոգման առիթով։ Ցանդրէյլիին շնորհված է Սեւ-Արծի շքանշանը, իսկ Պրինէտտիին—Թագի շքանշանը։

ԲԵՐԼԻՆ։ Հանդիսաւոր ճաշկերոյթի ժամանակ, թագաւորի կենացը խմելիս, կայսրը ասաց, թէ ողջունում է Հրան ոչ սովորական քաղաքավարութեան ձեւի համար, այլ խորին եւ սրտագին զգացմունքով. ողջունում է թագաւորին, որպէս Հումբերտ թագաւորի որդուն, որ մի վեհանձն ասպետ էր, որպէս չքնաղ Իտալիայի թագաւորին, որպէս վերանորոգված դաշնակցութեան հաւատարիմ մասնակցողին. այդ դաշնակցութիւնը ապահովում էր Եւրոպայի խաղաղութիւնը տասնեակ տարիների ընթացքում եւ, Աստուծոյ օգնութեամբ, կապահովէ այսուհետեւ եւս երկար տարիներ։ Վերջում կայսրը «ուրա» աղաղակեց ի պատիւ թագաւորի։ Թագաւորը պատասխանեց իտալերէն, թէ կայսրի կողմից յայտնված անկեղծ բարեկամութեան զգացմունքը նա եւս տածում է ի բոլոր սրտէ. նրա համար նոյնպէս սրտաշարժ է յիշողութիւնը նախնիքների սերտ բարեկամութեան մասին. այդ յիշողութիւնների դրօշակի տակ երկու ազգերն եւս առաջ կը գնան քաղաքակրթութեան ճանապարհով, ապահովված վաղեմի բարեկամութեամբ, որ խաղաղութեան նշանացոյցն է մի եւ նոյն ժամանակ։ Թագաւորը բաժակ բարձրացրեց հզօր Գերմանիայի առողջութեան եւ բարգաւաճման համար, որ լուսազարդված է աշխատութեան եւ գիտութեան այնքան պայծառ փայլումով։

ԼՕՆԴՕՆ։ Նիւ-Կէստլից ստացված լրագիրների տեղեկութիւններով, Ռուսաստանից ուղարկված անձինք այցելեցին Նիւ-Կէստլի քաղաքային վարչութեան ներկայացուցիչներին՝ խորհրդակցելու այնպիսի շոգենաւային հաղորդակցութիւն հաստատելու համար, որ ծառայէր առեւտրական փոխանակութեանը Ռուսաստանի եւ Անգլիայի մէջ եւ որ ուղղված լինէր դէպի Տէյն գետի նաւահանգիստը—Նիւ-Կէստլ։ Քաղաքային իշխանութիւնների ներկայացուցիչ-

ները հաւատացրին, թէ կանեն ամեն հնարաւոր բան՝ այդ կարեւոր առեւտրական յարաբերութեան ճանապարհը բանալու համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ԳՈՒՇԱՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում Թիֆլիսի հաշուով)

Ուղղ գնացք Թիֆլիսից—Բագու շաբաթը մէկ անգամ ուրբաթ օրերը դուրս է գալիս առաւօտեան 10 ժամ 15 րոպ. (11 ժ. 49 ր.), հասնում է Բագու գիշերվայ 12 ժամ 11 ր. (1 ժ. 9 րոպէին)։

Ուղղ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս ուրբաթ օրերը գիշերվայ 12 ժամ 52 րոպէ (1 ժ. 50 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 2 ժ. 45 ր. (3 ժ. 43 ր.)։

Ուղղ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 5 ժ. 2 ր. (6 ժ.)։

Ուղղ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 9 ժ. 4 ր. (10 ժ. 2 ր.)։

Յետադարձ գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 56 ր. (4 ժ. 54 ր.), դուս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 9 ր. (6 ժ. 7 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 5 ժ. 40 ր. (6 ժամ 38 րոպէին)։

Մարդատար գնացքը Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 27 ր. (3 ժ. 25 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 7 ժ. 39 ր. (8 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 8 ժ. 29 ր. (9 ժ. 27 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.)։

Յետադարձ գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 11 ժ. 5 ր. (12 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 11 ժ. 34 ր. (12 ժ. 32 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.), հասնում է Բագու առաւօտեան 6 ժ. 16 ր. (7 ժ. 14 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 7 ժ. 5 ր. (8 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 39 ր. (7 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 7 ժ. 24 ր. (8 ժ 22 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 12 ժ. 5 ր. (1 ժ. 3 ր.)։

Յետադարձ գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.). հասնում է Սանահին 1 ժ. 35 ր. (2 ժ. 33 ր.), Ղարաքիլիսա գիշերվայ 3 ժ. 32 ր. (4 ժ. 30 ր.), Ալէքսանդրոպոլ առաւօտեան 7 ժ. 17 ր. (8 ժ. 15 ր.), Կարս ցերեկվայ 11 ժ. 1. (11 ժ. 59)։

Յետադարձ գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 4 ժ. 57 ր. (5 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ երեկոյեան 8 ժ. 5 ր. (9 ժ. 3 ր.), Ղարաքիլիսա 11 ժ. 42 ր. (12 ժ. 40 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 20 ր. (7 ժ. 18 ր.)։

Խառն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.) Ալէքսանդրոպոլ գիշերվայ 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.)։

Խառն գնացք Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս առաւօտեան 5 ժ. 25 ր. (6 ժ. 23 ր.), հասնում է Ղարաքիլիսա առաւօտեան 8 ժ. 35 ր. (9 ժ. 33 ր.) և Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 37 ր. (4 ժ. 35 րոպէին)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

**Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ**

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հարդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բարսեղեան—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Գ. Ա. Թարխանեան—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Կ. Ի. Գզելիեվ—6—7 ժ.

Գ. Ա. Թարխանեան—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Գնարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Առվանիստակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

## ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
## Ռուսմնարան եւ Պանսիօն
## Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Տեղափոխվում է Կրասիլնիկեանի տունը, Հայոց փողոց, եկեղեցու դիմաց։ Ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 25-ից։ 6—10

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԱՊԱՏՈՒՄԻ

Աշխատասիրութիւն Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆԻ

Գործս է Հաւաքումն պատմչաց Հայոց՝ ժամանակագրական կարգաւ, սկիզբէն մինչեւ ԺԷ դար։ Հաւաքիչն աշխարհաբար լեզուաւ կը յաւելու բացատրութիւններ եւ ծանօթութիւններ իւրաքանչիւր իջին ներքեւ։

Հանգամանք տպագրութեան. քառածալ մեծադիր, չքեղ թղթոյ վրա, եւ պատկերազարդ։

Յեռ աւարտման պիտի վաճառուի 50 Ֆրանկի։

Բաժանորդագրութեան ժամանակ գեղջ չի լինիր. բայց 10 օրինակ բաժանորդ գտնողին օրինակ մի եւս կը տրուի ձրի։

Մեր հասցէն՝ Direction de l'Imprimerie Arménienne, VENISE (Italie). 1—3

## ՄԱՍՆԱՒՈՐ ԴՊՐՈՑ
ԵՒ
## ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
## Ե. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

(ԾՆՆԴ. ՑՈՎՀԱՆՋԱՆԵԱՆՑ)

Թիֆլիս, Բեբուտովսկայա, № 38.

Ընդունում են երկսեռ ոեռի երեխաներ եւ պատրաստում բոլոր միջնակարգ դպրոցների համար։

Ընդունելութիւնը օգոստոսի 20-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից։ 3—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

## Թուաբանական խնդիրների

սիստեմատիական ժողովածուի II մասը (կոտորակներ)—հայոց թեմական դպրոցների երկրորդ դասարանի դասընթացքը։

Շուտով լոյս կը տեսնի եւ երրորդ դասարանի դասընթացքը։

ԿԱԶՄԵՑ Ց. ԶՈՀՐԱԲԵԱՆՑ

Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում, Գուտտենբէրգ գրախանութում եւ հեղինակի մօտ՝ Ներսիսեան դպրոցում։ 2—2

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ըստ գրաւոր պատուիրոյն թեմիս վիճակաւոր բարձրապատիւ սրբազան առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսի Գառնակերեանցին, պարտք եմ համարում յայտարարելու, որ Շուշի քաղաքի Ագուլեաց ս. Աստուածածին մայր եկեղեցւոյ համար հարկաւոր է ընտրել մի քահանայացու, որ ձեռնադրվելուց յետոյ հովուելով նոյն եկեղեցու երկու հիւանդ եւ ծերացած քահանաների ծխերը, արդիւնքի կէսն ինքը պէտք է վերցնի, եւ միւս կէսը տայ նոյն քահանաներին մինչեւ նրանց մահը։ Քահանայացուն պէտք է ունենայ որ եւ է թեմական դպրոցի, կամ էջմիածնի ճեմարանի աւարտման վկայական, եւ կամ բարձրագոյն կրթութիւն։ Ցանկացողներին՝ խնդրում եմ շուտով ուղարկել ինձ իրանց վկայաթղթերը, եւ համաձայնութեան թուղթ ժողովի ընտրութեան ենթարկելու։ Իմ հասցէն. Шуша, ктитору Акулинской св. Богородицы церкви, Хачатуру Хачатурову. 3—5

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

## Կ. ԿԷՕՆՃԵԱՆ

Վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց հիւանդների ընդունելութիւնը։

Առաւօտեան 9—2 ժ.
Երեկոյեան 5—8 ժ.

Հասցէն՝ Երեւանեան հրապարակ, տուն Գուրգենովի, № 2։ 4—0

ՀՈՐԱՒՈՑԻՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ

## ՊԱՐՍԻՑ ԾՈՅԻ
## ՁԷԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
## ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսից Ծոցի առեւտուրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի ն անաւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխադրում է Եւրոպայից Պարսկաստան եւ Պարսկաստանից Եւրոպա, դիւրամատչելի պայմաններով.—Հասցէն. Zeytoon C. G. Buchire Persian-Gulf. 44—100

## ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
## ՑԱՐ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

(XI-րդ տարին իր գոյութեան)

Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ, ցերեկօթիկ (полупансіонеръ) եւ երթեւեկ բոլոր պետական միջնակարգ դպրոցները մտնելու համար։ Վարժարանում աւանդվում են բոլոր ընդհանուր կրթական առարկաներից՝ նաեւ կրօն-բարոյախօսութիւն, հայոց լեզու, ֆրանսերէն ու գերմանական լեզուներ հմուտ ուսուցչուհիների եւ ուսուցիչների ղեկավարութեամբ՝ թէ գործնական եւ թէ տեսական կերպով։ Վարժարանում այս տարվանից կընդունվեն նաեւ իբրեւ գիշերօթիկներ՝ կրկնողութեամբ հանդերձ (съ репетиціей) այնպիսի գաւառաց աշակերտներ, որոնք ուսանում են Թիֆլիսի կառավարչական բոլոր դպրոցներում։ Ցատկապատրաստվում են աշակերտներ Թիֆլիսի նորաբաց կայսերական գեղարուեստական դպրոցի համար՝ ծրագրի համապատասխան։ Զրիավարժ չքաւոր աշակերտներ ընդունվում են բարեգործների ցուցմամբ։

Հասցէն՝ Тифлисъ, 2-й уч. Межевая ул., домъ Караева, № 60. Պայմանների մասին կարելի է տեղեկանալ ամեն օր, ժամի 9—2-ը եւ երեկոյեան 4—7։

5—6 Վարժարանի կառավարիչ՝ Ց. Ղարագեօզեան

Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. վաճառականներին, որոնք կը կամենային գործ ունենալ ՎԱՐՇԱՎԱՑԻ հետ, որ ես վաղուց արդէն վերաբնակված լինելով Վարշավայում, յանձն եմ առնում եւ կատարում եմ ամենայն տեսակ

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

եւ իմ բազմամեայ հմտութեամբս առեւտրական ասպարէզում օգտաւէտ կարող եմ լինել դիմող վաճառականներին, որոնց խնդրում եմ դիմել ինձ հետեւեալ հասցէով.

ВАРШАВА, Медовая 17, кв. 33. Минасу Яргулову. (կ. հ.) 12—50

## ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐ

Պատրաստած յատկապէս պետական դպրոցների համար եւ հոգեւոր ու դպրոցական վարժարանների թիւններից թոյլատրած

Ա Շ Խ. Ե Զ Ն Ի Կ Ա Ի. Ք Ա Հ. Ե Ր Զ Ն Կ Ե Ա Ն Ի

1) Առաջին գրքոյկ.—«Աղօթքներ եւ գլխաւոր տօների համառօտ պատմութիւն։» Գինն է 20 կոպէկ։

2) Երկրորդ գրքոյկի ա. մասը.—«Հին ուխտի ս. պատմութիւններ։» Գինն է 30 կ.

3) Երկրորդ գրքոյկի բ. մասը.—«Նոր ուխտի ս. Պատմութիւններ։ Գինն է 30 կ.

Գրավաճառանոցների եւ ուսումնարանների համար 30% զիջումն է լինում։ Ճանապարհածախսը գնողների վրա է։ Դիմել՝ Тифлисъ. Прот. Езнику Ерзинкянцу.

(Ե. հ. շ.) 3—12

Ֆինանսների Նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

## ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
## ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առեւտրական, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների Նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ գործնական ձեւով հաշուապահութիւն 4 ամսում, պատասխանատուութեամբ, եւ հարկաւոր դէպքում՝ յանձնարարականով

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ. նաեւ նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշուապահութիւն։
2) առեւտրական թուաբանութիւն։
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Մուրհակային եւ առեւտրական օրէնքներ։
5) Վայելչագրութիւն եւ ուղղագրութիւն ամենավաղ ձեռագրի։

Ընդունելութիւն ամեն օր։ Պարապմունքները սկսվում են 1902 թ. Սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 րուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում է, ֆինանսների Նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, վկայագիր։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիս ում, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիր ուղարկվում է ձրի։

Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (կ. ե. հ. շ.) 20—35

## ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են հետեւեալ դասագրքերը

ԱՂԱՑԵԱՆ Ղ., «Մայրենի լեզու», առաջին տարի, 25 կ., բ. տ. 30 կ. գ. տ. 55 կ.
ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ, » » » 35 » » » 40 » » » 50 կ.
ՆԱԶԱՐԵԱՆ Է. ք., «Ընտիր հատուածներ», մասն ա. 1 ր.։ «Հայոց լեզուի ուսուցիչ», գ. տարի 40 կ., դ. տ. 60 կ.
ՍԱՀԱԿԵԱՆ Ս. ք., «Դասատետր կրօնի», առաջին տ. 20 կ., բ. տ. 20 կ., գ. տ. 30 կ.։ «Սրբազան պատմութիւն հին ուխտի» 40 կ., «Սրբ. Պատմ. նոր ուխտի» 30 կ.։ «Մուսուցումն քրիստոնէական կրօնի» 2 ր.։
ՁՈՀՐԱԲԵԱՆ Ց., «Թուաբանական խնդիրներ», սիստեմատիական ժողովածու, կոտորակներ, 40 կ.
ՕՐԲԵԼԻ Ց. ք., «Դասագիրք եկեղեցական պատմութեան, երկ. տպագրութիւն, 1 ր.
ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆ Մ., «Հայկական գեղանկարութիւն», չորրորդ տպագրութիւն, 30 կ.
ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ Ց., «Այբբենարան առանց ուսուցչի սովորելու համար, 94 պատկերով, 35 կ.
ԱՐԱԲԱՋԵԱՆ Ց., «Մայրենի լեզու», ա. տարի, երկ. տպագր., պատկերներով, 25 կ.
ԿՈՒՍԻԿԵԱՆ Կ. եւ ՍԱՐԳՍԵԱՆ Լ., «Մայրենի խօսք», ընթերցանութեան ձեռնարկ, համառօտ բառգրքով 70 կ.։
ՋԱԼԱԼԵԱՆ Վ., «Տարրական երկրաչափութիւն», Պլանիմետրիա, մ. ա. 1 ր. 20 կ.։
ՂԱՄԱՋԵԱՆ Ղ. ք., «Համառօտ պատմ. Հայց եկեղեցու», պետ. միջն. հայ ուս. համար 30 կ.
ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Ի., «Համառօտ տրամաբանութիւն», հայ ուսս. ց. եւ աշակերտ. համար, 1 ր.
ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆ Մ., Դասագիրք գծագրութեան» (175 գծագրական ձեւերով) 50 կ.
ԱՂԱՆԵԱՆ Գ. ք., «Կարգ Աստուածապաշտութեան Հայաստ. ս. եկեղեցւոյ, 35 նկարով, 50 կ.
РОДЖЕРСЪ Ал., „Учебникъ англійскаго языка, ч. вторая, 1 р. 50 к.
ЯРОШЕВСКІЙ К., „Краткій курсъ естественной исторіи“, 1 р. 40 к.
ИГНАТОВИЧЪ В., Учебникъ французскаго языка ч. I 50 к.
ФИШЕРЪ М., „Нѣмецкая грамматика“, этимол. и синт. 1 р.
МАРТЫНОВСКІЙ В., „Русскіе писатели“, ч. I. 1 р. 25 к.
МАКАРІЙ, „Уроки чистописанія для дѣтей—25 к.
ЯНЧИНЪ К., „Краткій учебникъ географіи“, курсъ I, 60 к.
УШИНСКІЙ К., „Родное слово“, азбука, годъ I 30 к.

Եւ այլ զանազան տեսակ դասագրքեր։ Ցանկացողները կարող են գրքերը ստանալ կազմված։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ». Г. Галустяну, Лорис-Меликовская ул. № 11. 2—3

Дозволено Цензурою, Тифлисъ, 16 Августа 1902 г.

Электропечатная Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.